

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ ԿԻՄ ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻ «ԶՎԱՅԵԼԱԾ ԵՂԵՄ» ՊԱՏՈՒՄԱՇԱՐՈՒՄ*

Բանալի բառեր՝ ժամանակային ընդգրկում, մշակութային տեղաշարժեր, հասարակական ժամանակներ, գեղարվեստական ընդհանրացումներ, բեկված ճակատագիր, շղթայական զարգացում, գրողի կենսափիլիսոփայություն, գեղագիտության հիմնաքար, պատճառահետևանքային կապ, հրապարակախոսական շեշտադրումներ:

Կիմ Գաբրիելյանը գրականություն մտավ անցյալ դարի 70-ական թվականներին: Նա ընթերցողներին հայտնի է բանաստեղծական և արձակ ժողովածուներով: Գրողի նախասիրած գրական ժանրը պատմվածքն է: Վերջերս Կ. Գաբրիելյանը ընթերցողներին ներկայացրեց «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ» ժողովածուն, որն ընդգրկում է «Զվայելած եղեն» պատումաշարը, «Գրառումներ սրտի վրա» բանաստեղծական շարքը և «Լևոն Խեչոյանի ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունները» մենագրությունը: Գրականագիտական առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում պատումաշարի թեմատիկ, գաղափարական, ժամանակային, կերպարային ընդգրկումները:

Գրողն իր ապրած ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, մշակութային տեղաշարժերի անմիջական կրողն է: Այդ տեղաշարժերն այս կամ այն ձևով ներագրում են նրա ստեղծագործական երևակայությանը և արձագանքվում գեղարվեստական ստեղծագործություններում: Ստեղծագործող անհատն իր ներհայեցողությամբ կարող է կանխազգալ ապագան և հետախուզումներ անել անցյալ ժամանակներում: Բանաստեղծությամբ գրականություն մտած Կիմ Գաբրիելյանին իր ապրած հասարակական ժամանակների հրամայականները պարտադրեցին անցնել արձակի: Իրական, կոնկրետ փաստերի խորագնումները և դրանց արմատների հայտնաբերումը գեղարվեստական ընդհանրացումների հարուստ առաղծ են, և Կ. Գաբրիելյանի «Զվայելած եղեն» պատումաշարում այդ ընդհանրացումներն ակնհայտ են: «Ինչպես մարդու կյանքը, բնության և հասարակական երևույթները, այդպես էլ այդ ամենը արտացոլող գեղարվեստական ստեղծագործության ներքին կյանքը դուրս չէ ժամանակից ու տարածությունից», - հատկանշում է գրականագետ՝ Զ.Ավետիսյանը: (1) Այս կտրվածքով Կ. Գաբրիելյանի պատումաշարի ժամանակային ընդգրկումները գրողի ապրած ժամանակաշրջանով չեն սահմանափակվում: Հենվելով վերիուշի գրական հնարանքին, երբեմն պատումն անելով անցյալ ժամանակի մեջ՝ գրողը վերակենդանացնում է հասարակական անցյալ տեղաշարժերը:

*Հոդվածն ընդունվել է 20.05.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի գրականության ամբիոնը:

Տարաբնույթ դրդապատճառներով և հիմնականում խորհրդային տնտեսությունների խոշորացման հետևանքով լեռնային փոքր գյուղերի մահացման թեման մոր չէ մեր գրականության մեջ: Երևույթի լավագույն գեղարվեստական խտացումները Վ. Պետրոսյանի «Մենավոր ընկուզենի» և Մ. Գալշոյանի «Բովտուն» ստեղծագործություններն են: Արցախում տնտեսությունների խոշորացման հետևանքով դատարկվող գյուղերն այլ ճակատագիր են ունենում. որպես Ադրբեջանի հեռահար պետական քաղաքականության արդյունք այդ գյուղերն իբր տարրերայնորեն լցվում են ազերի թուրքերով, թուրք, որը դարեր ի վեր աչք ունի հայի տարածքների, տուն ու տեղի, մշակութային արժեքների վրա, ինչը հիմա առանց դիմադրության նրանք է դառնում: Կ.Գաբրիելյանի «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ» քնարական շնչով հագեցած պատմվածքի անանուն հերոսի ժամանակը ձգվում է մինչև ռուս-ճապոնական պատերազմը և ավարտվում մինչև արցախյան շարժման արշալույսը: «Գնաց՝ քսան, եկավ՝ քառասուն»: Բայց անցած ջահելության դրաման չէ, որ ապրում է հերոսը, այլ դատարկված ծննդավայրի՝ Չընգըլի դրաման. «Մեր գյուղը... Թուրքը թողեց, որ գյուղ մնա: <...> Թողել, փախել էին, որ թուրքը չգա, կոտորի: Մարդ, կնիկ, մանուկ-մեծ: Էդքան շատ ղսմաթ ունե՞ր թուրքը, բասմաչից էլ շա՞տ... Թյո՛ղ... Թքեց ու կացնի կոթը սեղմեց մատներում: Ամո՞թ»: (2) 20-րդ դարասկզբին հայ թուրքական ընդհարումներից տուժած և տնտեսությունների խոշորացումից դատարկված Չընգըլը իրենով վերակենդանացնելու գաղափարը ապրեցնում է նրան: Նրա հոգում արձագանքում է բնության սքանչելիքը. «Չընգըլը՝ բարձր-բարձր: Բայց արևը Քյաթուկա սարից է ելնում: Քյաթուկա սարը՝ սիրուն-սիրուն, գարունը ծխամորճ է ծխում գոլորշի-գոլորշի, ամառը՝ սև-կապույտ, աշմանը չես կարող որոշել իսկական գույնը: <...> Մեր սարերը՝ սև-կապույտ-մշուշագույն, ու նրանց վրա մշտնջենական խոնավ թախիծ կա՝ մշուշի տեսքով՝ հա՛մր-հա՛մր... Այստեղ լեզենդներ են հյուսվել, առասպելներ են չափազանցվել, երազ, շատ երազներ են խառնվել մեր սարերի խոնավ զեփյուռին ու զեփյուռի նման հալվել... <...> Մեր գյուղը՝ ծեր այա, փեշեր ուներ շուրջը փռած, գլխում՝ հին ու մոր հուշեր, աչքը՝ երկնագույն ժամանակին, ու՞ր է...»: (3) Երկնագույն ժամանակը գյուղի շենությունն է, երբ գյուղը գյուղ էր իր մարդկանցով: «Աշխարհի բոլոր կողմերը ման եկած, տեսած հողն ու ջուրը ոտի տակ տված» հերոսը որոշում է գյուղն ապրեցնել իր մոր կառուցած տնով, հիմնած տնտեսությամբ, կնոջով, ծնվելիք երեխաներով: Աշխարհից, Աստծուց և մոր ղլիջցիներից խռոված, որովհետև նրա համար անընդունելի, նաև անհասկանալի են բոլոր նրանք, ովքեր կարողացել են լքել գյուղը. «Բա հարյուր տարվա գերեզմանոցից կխռովե՞ն, հեր ունեք թաղած, մեր, պապ, տատ, հարազատներ: Էն աշխարհում էլ պիտի հորից-մորից հեռու ապրե՞ք...»: (4) Աստծուց էլ խռոված, որովհետև. «Մարդու աստվածը զավակն է, որ չեղավ, ի՞նչ գատ: Որ չեղավ, գյուղը ո՞նց պիտի ապրի: Ինչքա՞ն: Ասենք՝ ապրեցին իննսուն, հարյուր, հարյուր տասը տարի, հետո՞...»: (5) Հերոսը գիտակցում է վերջը: Մարդ մահկանացուն հավերժական չէ: Իր և կնոջ մահով կվերամահանա գյուղը: Գրողն իր գաղափարական եզրահանգմամբ արդիական հարց է բարձրացնում: Այսօր էլ քաղաքը շարունակում է ուռճանալ գյուղերի դատարկման հաշվին: Երևույթը կարող է դիտվել որպես կյանքի բնականոն զարգացման ընթացք: Մինչդեռ ոչ ոք չի կարող հերքել, որ մարդուն մարդ պահողը հողն է և, գոյի կենսունակության հիմքում առաջին հերթին ընկած է մարդ-բնություն ներդաշնակությունը: Գրողի գեղագիտության հիմնաքար հանդիսացող այս ճշմարտությունը կասկածի ենթակա չէ: Սա բնությունը

մարդով բնություն պահելու և մարդուն բնությամբ մարդ պահելու օրենքն է, որի խախտման պայմանում փլվողը վաղվա հավատն է:

Երևույթը մի այլ կտրվածքով է դիտարկվում «Քիրվայության ժամանակներ» պատմվածքում: Ջրվերի հոգևոր դատարկումը գուցե սկսել է այն օրից, երբ «տեր Օհանեսի միրուքը խուզեցին, ուշ նոյեմբերի ցրտաշունչ օրով մինչև ոտաշորը մերկացրին ու քացով-շվկոցով գյուղից քշեցին»: Խորհրդային անհավատության ժամանակներ էին, որին փոխարինելու են գալիս խոշորացման տարիները: Ջրվերը միացավ Մրգաշատին, և ջրվերցին դարձավ մրգաշատցի. «Ջրվերը քանդվեց, դատարկվեց, մնացին կովանոց-ֆերման և երկու հարյուրամյա եկեղեցին և մի քանի անտեր, կիսավեր տներ»: (6) Քանի եկեղեցին կանգուն էր, Ջրվերից տեղափոխված Թորոսին թվում էր, թե ապրում է Ջրվերը, նույնիսկ՝ երբ Ջրվերը բնակեցվում է Հարթավայրից եկածներով, երբ գյուղը կոչվում է Հասանլու, երբ Հասանլուի բնակչությունն աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Թորոսի Ջրվերի հետ կապված հուշերը տարվա եղանակների հետ ծաղկում, հասնում, անցնում, գնում էին: Քանդած եկեղեցու տակն ու վրա եղած հիմքերը ցնցում են Թորոսին: Ջրվերը, ասես, նրա համար վերջնականապես մեռնում է, և նա դիվոտված հարցնում է Նազիմին. «Բա՛ մեր եկեղեցին ու՞ր է»: (7) Թուրքը չէր էլ կարող պատկերացնել պատշար Թորոսի կերպարանափոխության պատճառը, այլապես հազիվ նրան հրավիրեր իր տան պատերը շարելու: Որքան էլ Թորոսը քիրվայությունը հարգող ու խաղաղասեր մարդ լիներ, կատաղությունը գազաթնակետին է հասնում, երբ քանդած եկեղեցու քարը նրան են տալիս թուրքի տան պատին դնելու: Եկեղեցու քարի հետ շփումը Թորոսի մեջ լռած հիշատակներ են արթնացնում. «Ափը քսելուց՝ տաք խոտուտ եկավ, և ներսում հաճելի մի բան ուրվեց: Ի՞նչ էր, չհասկացավ, բայց արտառոց բանի ակնկալում կար»: (8) Արտառոցը երևի համակերպումի ժամանակներում Թորոսի ազնիվ պոռթկումն էր. «Ես ձեր մերը... <...> Գյուղը գողացել եք, հերի՞ք չէ, հիմա էլ եկեղեցի՞ն եք գողանում, խաչքա՞րն եք գողանում: <...> կորեք, պղծողի լակոտներ, մեր գյուղից գնացեք, կորեք»: (9) Գրողը պատշար Թորոսի ազգային դիմագիծն ամբողջացնում է խորունկ մի ընդգծումով. «Առանց հեկեկալու լացը եկավ, և այդ պահին նրան թվաց, թե ինքը տեր Օհանեսն է՝ խայտառակված, անարգված, իր տնից ու գյուղից վտարված»: (10) Թորոս-տեր Օհանես գուգահեռը երևույթի շղթայական զարգացման արտահայտությունն է, Թորոսի պոռթկումը՝ մեր համազգային պոռթկման նախասկիզբը: Կ. Գաբրիելյանը առաջիններից մեկն է, որ փորձում է գեղարվեստականացնել արցախյան շարժման բուն դրդապատճառները, ժողովրդական պոռթկումը՝ ստեղծելով իրական ազգային դիմագիծ ունեցող կերպարներ, որոնցից մեկը Օհանեսն է:

Ներկան ու անցյալն իրար մեջ ներհյուսվում են «Շարունակվող աշուն» պատմվածքում: Սմբած, տեղաշոր ընկած Սաթի նանի վերհուշներում վերականգնվում են ջահելության տարիները, հայրենական պատերազմի պատճառով իր և Սայու չկայացած ամուսնությունը, վեց տարուց հետո Սայու վերադարձը՝ գերության չքերվող խարանները մեջքին, իրենց միությունը, Սայու օտարվելը մարդկանցից, աքսորվելը, որովհետև ըստ փաստաթղթերի. «Սային նախկին դասալիք է, թշնամու մոտ գերի է եղել: Թշնամուն ծառայելու համար Սային պիտի տույժ կրի: Սային թշնամուն ինչու՞ ծառայեց, իր ուզելով էր, թե՞ ստիպեցին: Նշանակություն չունի»: (11) Անհատի պաշտամունքի տարիների սիբիրյան աքսորները վերակենդանանում են պատերազմի ժամանակ խորհրդային բանակի գերի ընկած զինվորներով: Սային դրանցից մեկն է: Նրա կյանքն ավարտվում է Աթայում:

Բեկվում է ընտանիքի ճակատագիրը, անքերելի կնճիռներ թողնում Սաթի նանի հոգում: Նոր ժամանակներն ավելի կնճռոտ են, որովհետև անարդարացի մի հրամայականով նրա ճակատագիրը փոխանցվել է ջահել հարսին՝ Շողերին, որը անհույս սպասում է խոպաններուն ճակատագրի հետքերը կորցրած ամուսնուն՝ Վաղինակ-Վաղոյին, ու շարունակվում է աշունն ընտանիքում: Գրողի ներթափանցումները հոգեբանորեն հավաստի են և գեղագիտորեն՝ հավանական: Բեկված ճակատագրերի տիպականացումը մերօրյա գրականության մեջ խորքային բնույթ է կրում: Վեր են հանվում այն պատճառահետևանքային կապերը, որի մեջ մարդ անհատը օտարվում է իր կոչումից ու նպատակից, կործանվում՝ առանց մեղքի փոքր ինչ բաժին ունենալու: Գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները անհատի ներուժի վերհանման արգելակներ են և ոչ խթանիչներ: Մարդու արժեքն ընկնում է հավասարվելով ոչնչի:

Ողբերգական ժամանակների դրաման շարունակվում է Կ. Գաբրիելյանի «Ամոթի արցունքներ: Երջանկության արցունքներ» պատմվածքի հերոսուհուն՝ Աշխենի հոգում: Աշխենն այն բազմաթիվ հայուհիների գեղարվեստական խտացումն է, որոնց կուսությունը լկվեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ հայաբնակ վայրերի հայկական կոտորածների ժամանակ: Նախնիների ծննդավայրում հայտնված ուսուցչուհի Աշխենի նախկին բարեկեցիկ կյանքից հետք անգամ չի մնացել: Նա կրում է մութ ու ցուրտ ժամանակների բոլոր զրկանքները: Մի կերպ հաղթահարելով լկված մարմնի մեջ անաղարտ մնացած հոգու ամոթանքը՝ ցանկանում է ինչ-որ մեկի նախապատրաստած թղթի թափոնի կապոցը տանել՝ տունը տաքացնելու: Մթության մեջ նրա կողքին հայտնվում է կապոցի «տերը»: Ու ճանաչում են իրար: Ծակատագրի դաժան ճանապարհներով անցած և ուսուցչուհի Աշխենի կողմից երբևէ մերժված Երեմը տեր է կանգնում Աշխենի մենակությանը՝ ասելով. «Սա ապրելու ձև չէ, Աշխեն, երկուսով ապրելն ավելի հեշտ կլինի: Մարդ ու կին չեղանք, քուր ու ախպեր կլինենք»: (12) Ու կինը համաձայնվում է: «Գուցե դա, իրոք, չվայելած եղեմն է լինելու՝ անծանոթ ու հանելուկային շրջադարձերով», - պատմվածքն այսպես է ավարտում գրողը: Գրողի արձակում հրապարակախոսական շեշտադրումներ չկան, բայց նրա հերոսներն իրենց մեջ կրում են ապրած ժամանակի կնճռոտ հարցականները և փորձում են ելքեր որոնել անլուծելի իրավիճակներից դուրս գալու համար: Մի դեպքում դա հաջողվում է, մի այլ դեպքում՝ տանում փակուղի: Կ. Գաբրիելյանն ինչպես շատագիր, այնպես էլ շատախոս գրող չէ: Պատմվածքներին ավելորդ ծավալ չի հաղորդում, ասելիքը կոնկրետացնում է մի քանի էջի վրա:

Արցախյան գոյապայքարի և պատերազմի յուրաքանչյուր օրը խորապես ապրած և մաշկի յուրաքանչյուր բջիջով զգացած անհատի զգացողություններն են խտացված «Գառին» պատմվածքում: Պատումն առաջ է տարվում առաջին դեմքով: Հեղինակ-պատմողը հանդես է գալիս որպես դեպքերի ականատես-մասնակից: Պատերազմն իր մեջ ոչ մի զավեշտ չի պարունակում: Այն իր չզրված օրենքներն ունի և պահի հրամայականի տակ մարդ կարող է իր բնույթին անհարիր արարք թույլ տալ: Վաղոն գերի թրքուհու հետ այն է անում, ինչ ժամանակին թույլ չի տվել անելու արդեն զոհված ընկերոջը՝ Հովիկին: Հայ նոր և նորագույն գրականության մեջ բազմակողմանիորեն տիպականացված է պատերազմի թեման: Արդի գրականության մեջ նոր խտացումներ են ձեռք բերվում: Այսօրվա մեր թշնամին երեկվա մեր դրացին է: Պատերազմի չզրված օրենքներով իրար դեմ կանգնած երկու ժողովուրդների կորուստների չափերը անկշռելի են: Սակայն, ըստ

գրողի կենսափիլիսոփայության ամենամեծ կորուստը մարդու մեջ մարդկայինի մահն է, անհաղթահարելի իրավիճակների մեջ բնագոյականի գերակայությունը: Մարդը թելադրող հանգամանքներում ետ է կանգնում քաղաքակրթական ձեռք-բերումներից, քարանձավային կերպարանք անում, որն անհարիր է գրողի գեղա-գիտական սկզբունքներին:

Խաղաղ, մերօրյա ժամանակների դրվագումներ են «Շեքին ընկած գավազանը», «Հարթավայրի բարկ արևը», «Բծավոր գոհություն», «Վայրի, թթու-դառը խնձոր», «Վերադարձ ամենասկիզբը» պատմվածքները: Գրողը ձեռք է մեկնում մեր օրերում լճացած արատավոր երևույթների գեղարվեստականացմանը՝ կերպավորելով աննշան մարդկանց: «Շեքին ընկած գավազանը», «Բծավոր գոհություն», «Հարթավայրի բարկ արևը» պատմվածքների հիմքում ընկած են ձգտումի և իրականության հակասությունները: Արցախյան ազգային զարթոնքին և պատերազմական օրերին հաջորդած ժամանակը բնորոշվում է իր անորոշ արժեհամակարգով: Դա բոլորովին այն ժամանակները չեն, որին ձգտել է զարթոնքի գազաթնակետին հասած ժողովուրդը: Կյանքը ճեղքվածք է տվել և հակադիր կողմերում են հայտնվել նույն ժողովրդին պատկանող, արժեհամակարգային ներհակ ընկալումներ ունեցող շերտերը: Գրողի ուշադրության առանցքում ինչ-ինչ դրդապատճառներով կյանքի հատակին գտնվող մարդկանց վարքագծերն են: Այդ մարդիկ դուրս չեն հասարակությունից, իրենց չնչին գոյությամբ աղավաղում են հասարակական կյանքի առողջ պատկերը: Գրողը հակված չէ մերժելու նրանց, բայց բացահայտորեն մերժում է մարդկանց այդ վիճակին հասցնող դրդապատճառները: «Վայրի թթու-դառը խնձոր» պատմվածքի հերոսը՝ Գարիկը, հրաժարվում է հղի կնոջ «սրտուզելիքը» կատարելուց, երբ համոզվում է, որ իրեն անտառ ուղեկցող վաթսույն անց Սուրեն քեռու կյանքը թթու-դառը խնձորից էլ դառն է: Հյուսիսկովկասյան ռուսական քաղաքում հայտնված ամուրի հայ տղամարդը, բախվելով կյանքի անմարսելի իրականությանը, հայացքն ուղղում է իր նախասկիզբը. «Հաջորդ օրը նա մեկնեց հոգու լույսերը մարած այդ քաղաքից: Գնաց դեպի իր ամենասկիզբը, որտեղ հոգատար ու հարազատ դեմքեր կային, մշտավառ կանչող լույսեր՝ մանկուց հուշերի պես փափուկ ու վստահելի...» (13), «Վերադարձ ամենասկիզբը»): «Ինչպես կյանքում, այնպես էլ գրականության և արվեստի մեջ ժամանակը անձնավորվում է՝ դառնալով մարդու, գրականության մեջ հերոսի ճակատագրի գոյակերպը: Գրական երկի մեջ սեղմված ժամանակը, որը նույն գեղարվեստական ժամանակն է, փոխանցվում է ընթերցողին՝ դառնալով նրա իրական կյանքի մի պահը» (14),-գրականագետ Ջ. Ավետիսյանի այս դիտարկումը լրիվությամբ տարածվում է Կ. Գաբրիելյանի պատումաշարի դիտարկված պատմվածքների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Ջ. «Գրականության տեսություն», «Նաիրի» հրատ., Երևան, 1998, էջ 144:
2. Գաբրիելյան Կ. «Սև-կապույտ-մշուշագույն լեռներ», «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2014թ., էջ 38:
3. Ն.տ., էջ 40:
4. Ն.տ., էջ 41:
5. Ն.տ. էջ 41:

6. Ը.տ., էջ 159-160:
7. Ը.տ., էջ 164):
8. Ը.տ., էջ 167:
9. Ը.տ., էջ 168:
10. Ը.տ., էջ 168:
- 11.Ը.տ., էջ 60:
12. Ը.տ., էջ 152:
13. Ը.տ., էջ 180:
14. Ավետիսյան Ջ. «Գրականության տեսություն», էջ 144:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԴԳՐԿՈՒՄՆԵՐԸ ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ «ԶՎԱՅԵԼԱԾ ԵՂԵՄ» ՊԱՏՈՒՄԱՇԱՐՈՒՄ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հոդվածում քննության է առնվում արցախաբնակ արձակագիր Կիմ Գաբրիելյանի «Զվայելած եղեն» պատումաշարի ժամանակային ընդգրկումները: Նշվում է, որ գրողն իր ապրած ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, մշակութային տեղաշարժերի կրողն է և այն տեղաշարժերը ներագդելով նրա ստեղծագործական երևակայությանը՝ արձագանքվում են գեղարվեստական ստեղծագործություններում: Կ. Գաբրիելյանի պատումաշարի ժամանակային ընդգրկումները գրողի ապրած ժամանակով չեն սահմանափակվում: Հենվելով վերհուշի գրական հնարանքին, պատումն անելով անցյալ ժամանակի մեջ՝ գրողը վերակենդանացնում է հասարակական անցյալ տեղաշարժերը և նրանց արձագանքները ներկա ժամանակում:

РЕЗЮМЕ

ВРЕМЕННОЙ ОХВАТ В СБОРНИКЕ РАССКАЗОВ КИМА ГАБРИЕЛЯНА "НЕ НАСЛАДИВШИСЬ РАЕМ"

ЖАННА БЕГЛАРЯН

Ключевые слова: временной период, культурные передвижения, противоречивые времена, художественные противоречия, сложенная судьба, цельное развитие, причинно-следственная связь, публицистические акценты.

В статье анализируются временные периоды сборника рассказов "Не насладившись раем" арцахского прозаика Кима Габриеляна. Отмечается, что автор является носителем политического, общественного, культурного процессов своего периода, и они, влияя на его творческое воображение, отражаются в художественном творчестве. Временной охват сборника рассказов Кима Габриеляна не ограничивается прожитым автором периодом времени. Опираясь на литературный метод воспоминания, рассказывая в прошедшем времени, автор оживляет общественные процессы прошлого и их отражение в настоящем.

SUMMARY

TIME BOUNDARIES IN KIM GABRIELIAN'S COLLECTION OF STORIES
CALLED "THE NEVER ENJOYED HEAVEN"

JANNA BEGLARYAN

Key words: *time inclusion, cultural movements, contradictory times, fiction contradictions, broken fate, total development, causal-consequential relation, publicist accents.*

The article considers time boundaries in Artsakhi short story writer Kim Gabrielyan's series of narratives called "The Never Enjoyed Heaven". The author is noted to be the bearer of the social, political and cultural transformations of his time and these transformations, as they affect his creative imagination, are well reflected in his works of fiction. The time boundaries of Kim Gabrielyan's series of narratives are not limited by his life time. Based on the literary device of flashback recollection the author refers to the past occurrences, revives the past social transformations and currently unfolds their reflections in the present time.